

ԱՐՁԵՆՏԻՆԱ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1998թ. հունիսի 30-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Արգենտինյան Հանրապետության առողջապահության և սոցիալական հարցերի նախարարությունը Համագործակցության շրջանակներն են.

- բժշկագիտության և բժշկական տեխնոլոգիաների այս կամ այն ճյուղում խորհրդատվություն նպատակով փորձագետների, մասնագետների փոխադարձ այցելություններ,
- երկու երկրների առողջապահության կազմակերպման մոդելների ուսումնասիրություն,
- առողջապահության ֆինանսավորում,
- բուժօգնության մակարդակի բարելավում,
- սոցիալական նշանակության պաթոլոգիաների կանխում,
- դեղորայքի, սննդամթերքի, բժշկական տեխնոլոգիայի, արյան և հեմոնյութերի սանիտարական վերահսկում,
- օրգանների փոխպատվաստում,
- բուժական կադրերի պատրաստում,
- առողջապահության բնագավառում տեղեկատվության համակարգում: